



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Յ. ԴԱԽԹԵԱՆԻ  
Մ Ա Ր Գ Ա Ր

# ՀՈԳԵՎԱՐՔԻ ԾԻԾԱԳԸ

Պատճառով

ԲԱԳՈՒԱՅ ՍԱՐՍԱՓՆԵՐԻՑ

891.99  
Մ-35

ՆԱԳՈՒՐ  
Տպարան Կ. Ա. Երևանցիանի  
1906

324 656



5091.99 *պ*

6 NOV 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Յ. ԴԱԻԹԵԱՆԻ

1729 ՄԱՐԳԱՐ - *պ*

*Պր. Արթուր Բար. Եր. Գրգռյազար Գրգռյազար*

*Բազմա հոգ*

**ՀՈԳԵՎԱՐՔԻ**

*14/1*

**ԾԻԾԱԼԸ**

*383*

*1001  
16576*

Պատկաւած

*383*

**ԲԱԳՈՒԱՅ ՍԱՐԱՓՆԵՐԻՑ**

(Արտատու «Արշարույ»-ից)




Բ Ա Վ Ո Ւ

Տպարան Ն. Ա. Երևանցիանի

1906





# ՀՈԳԵՎԱՐՔԻ ԾԻԾԱՂԸ

(Պատմութիւն)

## Ա.

Սոսկումի ու արհաւիրքների օրեր էին: Ինչ որ մի չար գօրութիւն մարդոց սրբաերը մտած, թունաւորելով նրանց երակները, գազանացրել էր բոլորին: Սարսափելի էր այդ օրերին հայել նրանց վրայ. մարդիկ գազան էին դարձել, գազան, որ արեան ծարաւի է, որը թէև կուշտ բայց կտառազած՝ զոհ էր փնտռում պատառտելու, արիւն թափելու, ինքն էլ չզիտենալով ինչի համար: Օգր վարակուած էր արեան գարշահոտութեամբ, որը շնչում էին մարդիկ և աւելի գազանանում: Դիակները փրուում էին փոքրցներում տաննեակներով. արիւնշաղթալու ու զգզուած, աւրածուած էին մէջքների վրայ և շուտ չհրերը ուղղած երկնքին, կարծես



բողոք էին սւղարկում դէպի վեր, և պատասխան շտանադով, յուսահատուած թիկը տարածել էին ու կպել հողին ամուր, շատ ամուր, կարծես երբէք չպոկուելու դիտաւորութեամբ: Մարդու մէջ զարթնել էր բնած զազանը և իր ամբողջ կատաղութեան թափը հաւարած արիւն էր պահանջում: Կենդանի զոհեր շատ բիշ էին երևում փողոցներում, ուստի և նա իր բարկութիւնը թափում էր մեռածների վրայ, իր արեան ծարաւին յագեցում էր տալիս յարձակուելով դիակների վրայ ու այլանդակելով նրանց:

Ու դիակներն այլանդակուած, այլանդակել էին փողոցները իրանց զարհուրելի հայեացքներով, լերդացած սև արիւնով, ջախջախուած գանգերով ու դուրս ժայթքած ուղեպններով: Ի՞նչ էր պատահել ինչո՞ւ էին մարդիկ կատաղել. այս հարցով ոչ ոք ժամանակ չունէր զբաղուելու և չէր էլ ուզում զբաղուել. բայց իւրաքանչիւրն զգում էր, որ ինքը կատաղել է, որ իր դէմի մարդը կատաղած է, ուրեմն և նրա ժանիքներին զոհ չգառնալու համար պիտի ջախջախէր նրա գանգը, սուրը պիտի կոխէր նրա փորը, ձեռքերը պիտի կտրատէր, անդամահատէր և արիւն հոսեցնէր: Բոլորը պապակուած էին արեան:

Սրեգակը, որ իր ճառագայթների շափ ոճիրներ ունի համարած, իր օրերի թիվ արհաւիրքների է ականատեսել, այդ օրը զարթում էր դուրս

գալ, և ամպերի թանձր քօղի տակ թափնուած, ամաչում էր նայել երկրին, այն երկրին, որին ինքն էր կեանք տուել: Երկիրը՝ երկրին միշտ գաշնակից ոճիր պործելիս, երեսը փաթաթել էր ամպերի հաստ ծածկոցով, աչքերը փակել էր, այս անգամ երկրին յանձնելով ոճիրների նախաձեռնութիւնը: Ու մարդիկ մտրթոտում էին, արիւնը հօտում էր առատութեամբ, քաղաքը դարձել էր դիակների բնակարան, օդը իր արիւնստ բուրմունքով կրքերը քաջալիրոզ: Գնդակները թռչում էին օդի մէջ կարկուտի նման, կրակի լեզուներն արևի դերն ստանձնած լուսաւորում էին քաղաքը և մի կատաղի ու սարսուռ ազդող ունոց գալիս էր ապացուցելու, որ նա գեռ կենդանի է: Ամբոխը խելքը կորցրած, չգիտակցելու համար իր ոճիրը, կուրծքը լայն բացած ունում էր ամբողջ ոյժով, իրանից հեռու վանելու խղճի խայթոցը: Մարդիկ ոճիր կատարելիս իրանց խղճից սոսկում են, ինչպէս գժոխքի արհաւիրքից. և շատ անգամ նրա խայթոցներին չդիմանալով, գոռում են խեղափորոյս ճիշով: Ջինուրները, ասում են, պատերազմի դաշտում սուկնամարտի գրոհի ժամանակ «ուռն» են կանչում, որպէսզի չկարողանան դիտակցել այն ոճրի շափը, որ վիճակուած է նրանց կատարել: Ամբոխը նմանուած էր մի պատերազմոյ բանակի, որը պատրաստուած է վերջին անգամ գրոհ տալ և ոչնչացնել ինչ որ կըպատահի առաջը. և վայ այն արարածին, որ այդ բոլորին



ամբոխի կատաղութեան ալիքներին հանդիպելու յանդգնութիւնը կունենայ:

բ.

Հեռախօսի զանգակը զնգզնուում էր անընդհատ: Զանգակի ու ամբոխի սունոյի ձայները միմեանց յաջորդում էին մի անասելի ներգաշնակութեամբ: Ահա հանգարտուեց ամբոխի սունոյը, լուսթիւնը փարատելու համար հեռախօսի զանգակըն է խօսում. զանգակի ձայնը կտրուեց և նրան յաջորդում է ամբոխի ուժգին, կատաղի սունոյը:

Եւ երկունն էլ նրան անհանդատացնում են. կարծես այդ երկու ձայները պաշն կապած միմեանց հետ, վճռել են բժշկի հիւանդատ ջղերը բայրայել:

Զանգը խօսեց, բժիշկը վազում է հեռախօսի մօտ, բերանը բացեց, ուզում է խօսել, բայց ահա նորից սունում է ամբոխը, և բժիշկը հեռախօսը լծպած վազում է դէպի պատուհան, ականջը կրպցնում ապակուն — լսելու այդ սունոյը, ուշադրութիւնը լարում է հասկանալու համար նրա էութիւնը: Ամբոխը լսեց, բժիշկը նորից է վազում հեռախօսի մօտ և ոյժերը հաւաքած ականջը սրում է, ջղկելու միմեանցից խոսովակի միջով հոսող բառերը, որոնք այսօր, չգիտես ինչու, այգպէս առկուածամային ու գժուար հասկանալի են դարձել:

Երկու զիշեր է շի քնել բժիշկը, երկու օր է

ուշինչ շի կերել և այդ երկու օրունն ընթացքում այբան է ապրել, որբան չէր ապրել անցած 25 տարիները մէջ. և միթէ կարելի էր քնելու կամ ուտելու մտտին մտածել, երբ ամեն բուպէ շարաբատիկ մահը սոսկալի գունաւորումներով ցցում էր նրա առաջ, երբ նրա երեւեկայութիւնը այլանդակ պատկերների ու օրհասական տանջանքների շտեմարան էր դարձել: Ո՞րքան պատկերներ էր տեսել անցած քսանուհինգ տարիների ընթացքում, որբան այլանդակ ու հրէշաւոր տեսք ստացած դիակներ էր անգամահատել իր ուսանողութեան տարիներում, բայց երբէք, երբէք չէր սոսկացել այնպէս, ինչպէս այժմ ոտկում էր այդ երեւեկայական պատկերների դիմաց: Գեռ երկու օր առաջ նա ինչերի՞ մտտին էր մտածում. երկու օր առաջ նա երբտասարդական լծարմ հոտանքը զգալով իր երակներում, լցուած էր մարդասիրական բարձր ու վեհ գաղափարների հմայքով, խոկ այսօր ամբած ուղեգով, ծերացած, գաղացող հոգով, մի մահաբեր սարսուռ էր զգում իր երակներում . . .

Ա՛հ, նորից հեռախօսի զանգը. նա սթափուում է և ստրերը ամուր խփելով յատակին վազում է հեռախօսի մօտ, բերանը մօտեցնում է լսողովակին և հարցնում.

«Ո՞րտեղից . . . ի՞նչ էր ուզում», ապա լծուլացած մարմինը յնեկով պատին, ականջը դէմ է անում հեռախօսին: Մի բառ է միայն լսում.



«Ճտապեցէք», և այդ բառը նրան աւելի է սարսափեցնում, քան ամբոխի դժոխային ուռնոցը:

— Բայց ինչպէս դալ, աղերսում է նա կերկերացող ձայնով, գողգոջուն շրթունքները հպելով հեռախօսի խողովակին:

— Ի սէր Աստուծոյ, ի սէր զազափարի, վըսփսում է հեռախօսը:

Այս անգամ բժիշկը չբարկացաւ և սոսկում էլ չզգաց. նրա մարմնով կարծես մի թարմ ու կենդանարար ելիքտրական հոսանք անցաւ և նա հեռախօսը թողնելով վազեց ընդարձակ գահլիճի միջով, մտաւ առանձնասենեակը, երկու ձեռքով սկըսեց խառնել սեղանի վրայի գրքերը, մի բանի վերը չալրտեց յատակին, մի թուղթ վերցնելով մօտեցրեց աչքերին, նորից ոտքերի տակ պցելով արորեց, դուրս քաշեց սեղանի արկղը, սկսեց տակն ու վրայ անել նրա միջի իրերը, ինչ որ մի բան կորպելով այնտեղից դրեց յետեի դրպանը, ապա նորից գահլիճի երկարութեամբ վազելով յափշտակեց գլխարկը և աւագակի նման կծկուած ուզեց դուրս փախչել, աստիճաններից արագութեամբ ցած թռչելով: Մօտեցաւ դրանք, ձեռքը տարաւ գէպի բանալին— բռնեց, ուղում էր պտտեցնել, բայց յանկարծ ձեռքը յետ քաշուեց կարծես կրակից այրուած. նրա մարմնով նորից մի սարսուռ անցաւ և նա յետ գառնալով սկսեց աստիճաններից դանդաղ բարձրանալ:

Նորից լսուեց կառայի ուռնոցը, մի ահագին պրրգիւն, ապա ճարճաթիւն յաջորդեց ուռնոցին, յետոյ միբանի ճիշեր և ամեն ինչ լուեց: Բժիշկը ծուլութեամբ թիւր յենեց աստիճանների եզերակային, այրուող գլուխը դրեց թիւ վրայ և աչքերը փակած սկսեց հետադարձ շրջել: Գլուխը ծռուեց, գլխարկը վայր ընկաւ և աստիճաններից ոստոտելով ցած թաւ: Բժիշկը մոռացութեան գրկում ննջում էր աստիճանների վրայ, երբ յանկարծ նրան սթափեցրեց հեռախօսի զանգի ձայնը, որ այս անգամ աւելի ուժգին էր հնչում և ինչ որ օրհասական շեշտ ունէր իր մէջ: Յնցուեց, վերս վազեց, նորից գահլիճի միջով անցաւ առանձնասենեակը, նորից յետ դարձաւ և արագութեամբ սանդուխներից ցած թըռչելով, անդգայօրէն դուռը բացեց: Մշուշից խեղդուած լոյսը ներս խուժեց և բժշկի ոտքերի տակ երևաց մի սև բան: Նա կրկին գողաց, բայց խկոյն սթափուելով կռացաւ գլխարկը վերցրեց, երկու ձեռքով եզերքներից բռնած մինչև ալանջները ամուր սեղմեց գլխին ու դուրս վազեց առանց փակելու դուռը: Փողոցում ոչ որ շէր երևում: Նայեց, խոնաւ փողոցի երկարութեամբ կառք չըտեսնելով չհամարձակուեց ձայն տալ: Հեռու փողոցի ծայրում երևում էին մի խումբ գինուորներ, որոնք հրացանները ցից դրած գետնին, իրանք ինչ որ բանով զբաղուած էին: Այս բանը նրան յոյս տուեց



և նա սիրա առած, անխտահ բայլերը ուղղեց գէպի նրանց կողմը:

Գ.

Բժշկի ոտքերը անդգայարար քարերին խփուելով առաջ էին գնում: Մի բանի բայլ հազիւ արած, շչմեց սպականուած օդի գարշահոտութիւնից: Երկու օր ու գիշերուայ ընթացքում որքան այլանդակ պատկերներ հաւարուել էին նրա գանգի մէջ, որպիսի քստմնելի տեսարաններ այդ երկու օրուայ ընթացքում հիւսուել էր նրա դժբախտ երեւկայութիւնը, այժմ այդ բոլոր պատկերները բուն գրոհով եկան ցցուելու նրա տեսողութեան առաջ . . . :

Ընշում էր ծանր ու գանգաղ, կուրծքը սեղմում էր իր մէջ ամփոփուած թորքերը, թոյլ չտալու համար բորբոսնած օդին ներս խուժելու նրանց խորշերը: Բայց ոտքերին ոյժ տալով աշխատում էր առաջ գնալ: Պիտի կատարէր մի դժուարին ու անտանելի ճանապարհորդութիւն, գիակներին ու գանգերի վրայով պիտի անցնէր, արեան վտակների վրայից թռչկոտելով պիտի առաջ գնար . . . Բայց պիտի գնար, նրան կանչել էին, յիշեցրել էին իր սուրբ պարտականութիւնը: Գնդակների տարափի տակով պիտի անցնէր, բայց պիտի գնար . . . իր պարտքը կատարելու: Ահա նրա առաջ փողոցում, ծառի տակ ընկած է մի դիակ, իրան արեան

մէջ շողախուած, գնդակը դիպել է կրծքին և արեան բուն հոսանքը ցայտելով այնտեղից, գատկական գառի պէս ներկել է ամբողջ մարմինը: Բայց նա առաջ է գնում, երկիւղի գիտակցութիւնը կորցրած: Ահա մի ուրիշ դիակ, սարսափների ու յուսահատութեան գերագոյն բուլէին հրգեհից ազատուելու յուսով շարտել է իրան եռայարկ շինութեան բարձր պատշգամբից և ամբողջ մարմնով ջախջախուել: Նա կպել է գետնին, երեսը խրած հողի մէջ և երկու ջախջախուած ձեռքերով ամուր գրկել է գետինը, կարծես երկնքից խռոված, երեսը նըրանից շուռ տուած: Ահա նրա կողքին մի ուրիշ էակ, որի շորերից, սակայն երևում է, որ պարծեալ կին է. մահաբեր գնդակը չէ դիպել նրա կրծքին և ոչ էլ սուրբ յօշոտել նրա ազդերները. արդեօք մահակնով են խփել թէ քարով, յայտնի չէ բժշկին, թէ է նա գիտութեան ամբողջ պաշարը հաւաքած իր մէջ, անթարթ գիտում է նրան: Ահեղ հարուածից գազաթը կիտով շափ ջարդուել է և գանգի լայն բացուածքից արեան մէջ շողախուած կարմիր ուղեղը դուրս թափուելով, հերարձակ գլուխը, որից սակայն ոչ մի նշան չէ մնացել, սօսնձի պէս գամել է գետնին: Ու բժիշկը առաջ է գնում մի անգութ, գատնապարտելի անփութութեամբ:

Ահա մի ուրիշը—ճակատին, ծնօտին, բաց կրծքի երկու կողմերում գնդակի հետքեր. 4 գրնդակներ, ափսոս, ափսոս գնդակներ—ի զուր փշա-



ցել են, մէկը նրանցից բաւական էր, միայն ճակատինը հերիք էր նրան ընդդէմ պէս մահացնելու: Մարդկային շռայլութիւնը այստեղ էլ շտապել է իր ծառայութիւնը մատուցել տիրոջը. ափսոս, ճնացած երեք գնդակներով կարելի էր նորից երեք հսկայ մարմինների փուխ գետին: Բայց մարդկային շռայլութիւնը դրանով չէ բաւականացել, մարդը կարծել է թէ անազնիւ զոհը չորս գնդակ ստանալուց լիտոյ կարող է մի հրաշքով—չէ՞ որ հրաշքները անպակաս են—դուրս պրծնել իր ձեռքից ու նենգութեամբ փախչել ու սուրբ օգնութեան է կանչել իրան, որի մի հարուածը կոկորդին է կտրել մինչև ծոծրակը, իսկ միւս հարուածը ըմբոստ զոհի կողքերին է ջարդ ու փշուր արել:

Ահա մի ուրիշը . . . բայց բժշկի խելքը մադում է, զուրը պտտում, աչքերը սեանում են, ծնկները գոդգոզարով ուժասպառ են լինում և նա վայր է ընկնում:

Յանկարծ մի գեր ազուա թեկերը լայն բացած, շարագուշակ կանչոցով սիզապանձ գնացրը ուղղեց դէպի ցած և բազմելով դիակներից մէկի այլանդակուած դէմքին, սկսեց նրա անցած օրերի մեղքերը երեսուզը տալ և կտուցը մօտեցրած նրա ներկած ախանջին, երկար խրատներ էր փոփոսում ու դաս տալիս, թէ ինչպէս պիտի ապրել աշխարհում այնուհետև: Ահա մի ուրիշ խումբ էլ եկաւ:

Ազուաների յալթանակն էր:

Բժիշկը ոտքի ելաւ, յիշեց, որ ինքը բժիշկ է, պարտք ունի կատարելու և սարքերին նորից ոչ թ տուեց:

Երկինքը հետաքրքիր շարագործի պէս կամացուկ ամպեղէն քօղը երեսից հեռացնելով, գոզունի կերպով աշխատում էր նրա արանքներից նայել իր դաշնակից երկրին՝ տեսնելու համար թէ՛ նա բարեխիղճ կերպով կատարել էր իր պաշտօնը:

Արեգակը, որ երկու օրից ի վեր ճառագայթներով չէր գուարճացրել իր երկրաւոր գաւաղներին, այժմ զգոյշ կերպով ամպերի հազուադիւտ ճեղքերից մի քանի ճառագայթներ ուղղեց ազուաների երամի վրայ, որ նրանց հարսանեկան հանդիսի շրեգութիւնը կատարեալ լինի: Տիեզերքը երկունքով բռնուած կնոջ պէս անրում էր, վիրաւոր սրտով դիտելով իր գաւաղներին--երկնքի ու երկրի անմեղ կատակները: Իսկ բժիշկը յիմար փիլիսոփայի նման քննադատելով երկնքի ու երկրի արարքները, գերագոյն ճիգ էր գործ դնում այդ ընդհանուր գուարճութիւնից խուսափել, հեռու փախչել:

Զինւորները կանգնեցրին նրան, դրպանները, ծոցերը, մէջքը, թեկերը, մինչև անգամ սարքերը շօշափեցին և յետևի դրպանից մի ինչ որ բան վերցնելով, երբ համազուեցան թէ՛ նրա մօտ այլևս մարդասպանութեան գործիք չկայ, բայց թողին, գեւ մի բառ էլ անհոգ ողորմածութեամբ նրան շռայլելով:

— Կարող էք գնալ:



—Ասացէք խնդրեմ, ասաց բժիշկը համարձակութեան ամբողջ թափը լարելով, գուք ինչո՞ւ էք այստեղ անհող կանգնել, ինչո՞ւ էք թողնում իզուր տեղը արիւն հոսի:

—Կարող էք ճանապարհը շարունակել, ասաց մէկը անվրդով ձայնով, սակայն որի մէջ մի ինչ որ սպառնական շեշտ նկատեց բժիշկը, ուստի և յետ նայելով ու իրան մենակ զգալով, այլ ետ ոչ մի բան չասաց և վիզը ծռելով մի այնպիսի դիրք ընդունեց, որ նրան հանդիպողը ձեռքը գրպանը կրտանէր, մի բանի կոպէկ նրան չպրտելու:

—Մեղանից կախուած չէ, ասաց մի ուրիշը, բժշկի վարանումը նկատելով:

—2էք կարող ուղեկցել Նիկոլայեվսկի փողոցը, ասաց բժիշկը գողգոջուն շրթունքներով, և թախանձովին հայեացքը ուղղեց նրանց վրայ:

—Իրաւունք չունենք այստեղից հեռանալու:

—Կրկարձատրեմ, ինչով ուզում էք, ասաց նա, մեքենայաբար ձեռքը գրպանը տանելով, և քսակը հանելով նրանց մեկնեց:

—Գնանք, մի վախենաք, պարոն, ասացին երկու դինուոր և հրացանները վերցնելով առաջ ընկան. բժիշկը տեղաւորուեց երկուսի մէջ և երեքով հաւասար քայլերով սկսեցին առաջ դնալ լուռ ու անխօս:

Երկիրը շարունակում էր իր գործը տեսնել, երկինքը դիտում էր նրան, օդը աշխատում էր ա-

ւելի թունաւորուել ու թունաւորել մարդոց: Բոցախառն ծուխը դանդաղ պտոյտներով աշխատում էր վեր բարձրանալ, բայց թանձր օդի շերտերին բաղխուելով մնում էր կախուած ոճրագործ քաղաքի վրայ, փռուելով ու տարածուելով նրա ամբողջ մեծութեամբ, տիեզերքից պարտկելու նրա ոճիրները: Տներն ու շէնքերն ահապին ճարձաթիւնով ու գողգոջով չըբում էին, իրանց տակ առնելով ոճրագործ քաղաքի անթիւ գոհերին, նրա ամբիժ անունը չըփտանդելու համար. գնդակները բիրաւօր վզվզոցով յաղթանակօրէն սաստում էին տիեզերքին, չխանդարել երկրի երիտասարդական հաղուագիւտ զուարճութիւնը: Ու ամենքը, այդ ամենը միտովն սպասնում էին մի րոպէում կլանել սղորմելի բժշկին, եթէ նա կրհամարձակուի մեղադրական մի չնչին բառ արտասանել արիւնարբու, բայց հզօր երկրի հասցէին:

Ու բժիշկը լուռ, գողգոջուն հոգով, տրոփող սրտով առաջ էր գնում, մահն աչքն առած:

Գ.

Բժիշկը մի անհուն հոգեկան թեթևութիւն զգաց, երբ երկար զանգահարութիւնից յետոյ զուռը բացուեց և նրա առաջ ցցուեց մի գունատ պատկեր: Երիտասարդ տանտէրը երախտագիտական բռնազրօսիկ ժպիտը շրթունքներին, ձեռքերը տարածեց և փաթաթուելով նրան, համարեա պրկած, աստիճաններից վեր բարձրացրեց:



— Գրուում ինչ կայ, պարոն բժիշկ, ասաց  
երիտասարդը, երբ վեր էին բարձրացել և բժիշկը  
այժ գործ գնելով գլխարկը հանում էր. գորբ չէ  
եկել, այս գրուած թիւեր մինչև երբ կշարունակուի:

Բժիշկը լուռ ուսերը թօթուեց, հազայ պա-  
տասխանի փոխարէն, մի սառն հայեացք ձգեց իր  
չուրջը, ապա դառնալով երիտասարդին.

— Ո՛ր է հիւանդը, հարցրեց:

Նրան ներս տարան:

Մի կին ու տղամարդ նստած էին հիւանդի  
մահճակալի մօտ, յուսահատութիւն ու անքնութիւն  
դէմքերին: Բժշկի ներս մտնելով նրանք ստրի  
թռան և զիմաւորեցին ինչպէս երկնքից եկած մի  
թանկագին հիւրի:

Փոքրիկ մահճակալի վրայ պառկած էր մի  
անմեղ, դեղին թերթերուներով շէկ հրեշտակ:  
Փոքրիկ աղջիկ էր, հագլու 4—5 գարուն տեսած.  
տիֆը, որ խտրութիւն գնել չգիտէ իր դոհերի մէջ,  
որ ծերերին ու երիտասարդին, պատանուն ու ման-  
կանը հաւասար աչքով է նայում, չէր զլացել իր  
ամբողջ ջանքերն թափել մի անմեղ արարածի մա-  
շելու համար. դուռնաւ-մոմի պէս սպիտակ գէմքի  
վրայ հագլու նկարում էին երկու խոր գնացած  
աչիկներ, վերջալոյսի հագլու նշմարելի փայլով.  
սպիտակ գէմքի վրայ գծագրում էին կարմիր,  
բարակ շրթունքները ճնճուկի ձագուկի բերանի  
«նարօտի» նման:



Երբ բժիշկը մօտեցաւ նրան, Կոնստանտին  
թիկնները վերմակի տակից հանելով անաւայր ձուռ-  
քերի մէջ, մանկիկը աչքերը հանդարտ թարթեց և  
խոր գնացած բիրերը անմեղ կերպով սեռեց նրա  
երեսին:

Բժիշկը բուլեւալէս մոռացաւ իր հոգու մէջ  
կենդանացած բոլոր այլանդակ պատկերները, մոռա-  
ցաւ իր կրած բոլոր տառապանքները և զգաց իրան  
երջանիկ, որ այդքան փոթորիկները ու արհաւիրը-  
նքերի միջից անցնելով, այդքան դժխեմ ու սոսկալի  
տանջանքներ կրելուց յետոյ, քաջութիւն ունեցաւ կեն-  
դանի մնալու և այժմ մի մարտուղ ճրագի ձէթը կա-  
րող էր աւելացնել: Նրա հոգին լցուեց մի դուրեկան  
կենդանարար հոսանքով. ինչ աւելի երջանիկ բուլե  
մարդկային լքուած հոգու համար, քան այն, երբ հո-  
գին յուսահատութեան կապանքներից ազատուելով  
համակուում է իր սուրբ պարտականութեան կատար-  
ման զիտակցութեամբ: Ու բժիշկը երջանիկ իր դրու-  
թեամբ, խնամատար հոգով քննում էր հիւանդի  
երակը:

Քայց սհ, չարագործ ճակատագիր... Նա չկա-  
րողացաւ երկար վայելել այդ երջանկութիւնը—նո-  
րից լուեց աշխարհաստան ունոցը, այս անգամ  
աւելի խրոխտ, աւելի սպառնական. բժշկի մար-  
մնով մի գող անցաւ. նրա մտապառկերները խա-  
նուեցին իրար. այլանդակ պատկերները նորից երե-  
ւան եկան նրա հոգու առաջ, նրա անպօրութիւնը

1001  
2521



ծաղրելով:

Հիւանդին թողեց, շփոթուած ոտքի կանգնեց, ծոծրակը քորեց, փոզպատն ուղղեց, հազաց, թաշկինակը հանեց, նորից գրպանը գրեց և մի բիշկետոյ զբազուեց հիւանդով:

— Ոչինչ, մի վրդովւէք, պարսն բժիշկ, առաց կմախք դարձած կինը մի այնպիսի տոնով, որ բժիշկը կարծեց թէ երան հրահանգում են վրդովւել—և ապա աւելացրեց—երանք հեռու են, չեն կարող մեր փոզոցը գալ. մեր դուռն էլ շատ ամուր է:

Բայց ունեցը մօտենում էր, հրացանների խմբական ծիծաղը աւելի սաստկանում:

Յանկարձ հիւանդի սենեակը լուսաւորուեց մի առատ կարմրագոյն լուսով. հիւանդը աչքերը բացեց, ժպտաց, իսկ հայրը արտասուքն աչքերին մօտեցաւ պատուհանին:

Գիմացի ահագին շէնքն այրում էր. մի խումբ մարդիկ նաւթի ամանները ձեռքներին՝ կտուր էին բարձրացել և նաւթը սրտկում էին տան վրայ: Ամբոխը շղթայ կազմած՝ շրջապատել էր շինութիւնը և մի քայլ յետ ու առաջ անելով, քայլերին համապատասխան գոռում էր, իր յաղթանակը հանդիտաւոր պարով փօնելով: Պատուհաններից դուրս էին շրպարտում իրերը դէպի ցած, որսնց վրայ էր ընկնում ամբոխը և յափշտակում. թռչում էին օդի մէջ պարելով սեղաններն ու աթոռները կտարտած, ինչպէս ահեզ փոթորիկների ժամանակ ճղակոտոր կաղնիներն

ու եղնիկները: Թախում էին վերմակներն ու բարձերը բզիկ-բզիկ եղած և նրանց միջից փետուրներն ու բրդերը դուրս թռչելով՝ օդի մէջ աշնան տերևների նման խմբական պար էին յօրինում:

Պարում էին բոլոր առարկաները. և ապա նրանց պարին սկսեցին միանալ նաև շնչաւորները: Մարդիկ կիտախանձ ու տկլոր, կանայք հերարձակ ու զգգուած իրար յետևից ցած էին գլորում, նզովքի ու հայհոյանքի, սաքսափի ու տարակուսանքի շեշտերը շրթունքներին: Գլորում էին մարդիկ ինչպէս մեծ երկրաշարժների՝ ժայռի բեկորներն են գլորում ձորի խորանդունդ յատակը. գլորում էին առանց յետ նայելու. անդունդի մէջ էր նրանց փրկութիւնը և նրանք իրար յետևից ցած էին թռչում ջարդուելով ու ջախջախուելով. և գետին ընկնելուց յետոյ ամբոխը կատաղած վրայ էր վազում յօշոտուած հոգիների մարմինն էլ յօշոտելու:

Այս բոլորը երևում էր պարզ, երևում էր, որովհետև դեռ լոյս էր, որովհետև ամպոտ երկնքի արեգակը նոր էր մայր մտնում: Լոյս էր և այս բոլորը տեսնում էին թէ մարդիկ, թէ Աստուած, թէ երկինք և թէ երկիր—բոլորն էլ շէգոր:

Բժիշկը հիւանդի ծնողների հետ մի պահ նրան մոռացած, սոսկումով լի հեռաբարբութեամբ դուրս էր նայում:

Ահա թէ ինչ ձայն էր, ահա թէ սվքեր էին



երկու ամբողջ օր երկրի բռնակաշուժեանը տիրացել:

Ամբոխն է . . . նա տեսնում է շատ մօտիկից, նրա ձայնը լսում է, նոյնիսկ անդգայաբար ափանջը աւելի է մօտեցնում պատուհանին, նրա դաւադրական բսփոցը լրտեսելու յուսով. բայց իզուր. ձայներ՝ անհասկանալի ու անբացատրելի այնքան, սրբան անհասկանալի էր այն, ինչ որ տեղի էր ունենում երկու օրից ի վեր:

Ասում են, երբ մարդ կատաղում է, երբ նրա մէջ զարթնում է յանկարծ քնած գաղանը, նա — մարդը գերազանցում է միւս բոլոր կենդանիներին իր գազանութեամբ. գաղանը, ասում են, յանկարծ կանգ է առնում հիպնոսուած մի սրտածմլիկ պատկեր տեսնելով իր առաջ. բայց մարդը այգպէս չէ. նա առաջուց միջոցներ է ձեռք առնում շհիպնոսուելու համար: Նա գիտէ որ իր մտադրութիւնը կատարելիս ճանապարհին կարօղ է թշնամիների հանգիպել, որոնց դէմ հարկաւոր է կռուել նպատակին հասնելու համար. նա գիտէ որ նախ քան ոճիր կատարելը ինքը պիտի կռուի մի զօրաւոր ու անողոր թշնամու դէմ — պիտի դիմադրէ խղճի խայթոցներին . . . և ահա զինուում է այդ անընկճելի թշնամու դէմ. մի սրուակ ալկօհօլը բաւական է ուժաթափ անելու զօրեղ խիզճը, մի բուռը աֆիօն կամ փօշի բաւական է խղճի խայթոցները բթացնելու համար: Ամբոխը հարբած ալկօհօլից ու թու-

նաւոր մթնոլորտից, գերազայն գաղանութեան օրինակներ է գրոշմում երկրի պատմութեան սև էջերում:

Ահա ջարդուած մարիններից գլուխները պոկուելով նորից դէպի վեր են թռչում ու կրակէ մէջ ընկնում. ահա ընկնող մարմիններին սրերով են վիմաւորում ցածից:

Մի ծերունի էր, գառամեալ ծերունի, հոյակապ, սպիտակ մօրուքով, ցած ընկաւ ուղիղ մայթի վրայ, գլուխը ջախջախուեց և նա մի քանի ցնցումներ գործելով հանդարտուեց. ամբոխը վրայ է վազում. իւրաքանչիւր մարդ աշխատում է առաջինը կատարել իր նուիրական պարտը. մի քանի հոգի սրերը մերկացրած ծերունուն խլխլում են. . . մէկին յաջողուեց մօրուքից բռնել, դէպի վեր քաշեց և ապա որի մի հարուածով ներքեի ծնօտը պոկելով, փառահեղ մօրուքից բռնած ցնծալով վերև է շարտում:

Ընկնողը մի կին էր. մի բախտաւոր ամենից առաջ հասաւ և որի մի հարուածով ափանջը կրտրեց ու ծամում է. միւսները զսպած՝ հռհռում են:

Մի մանկիկ ընկաւ ահաւոր ճիշով. փոքրիկ, անմեղ մանկիկ էր. բժիշկը տեսաւ — հիւանդ մանկիկին շատ էր նմանում. նրա փոքրիկ, ճկուն մարմինը մի քանի պտոյտներ գործելով օդի մէջ դամուեց փոսոցի քարերին. վազեց մէկը ամբոխից. իսկ ամբոխը հետաքրքիր նայում է:



Վագոզը վիթխարի հասակով, արիւնոտ աչքերով, ֆէսը գլխին, փամփուշտակալը մէջքից կապած, հրացանը ձախ ձեռքին, աջով մերկ սուրը բռնած մօտեցաւ մանկանը. սրի մի հարուած իջաւ նրա կրծքին, կուրծքը պատուեց և փոքրիկ սրտիկը հանելով դրեց սրի ծայրին ու վեր քարձրացնելով դիմեց ամբոխին, որը սակայն սաստիկ զբազուած էր . . .

Նա սուրը վեր ցցած պարում էր փողոցի մէջտեղը. բժիշկը նայում էր նրան կատաղի հետաքրքրութեամբ. նա դէպի վեր նայեց, դէպի բժիշկը և նրանց հայեացքներն հանդպեցին միմեանց. բժիշկը սոսկաց—կուզէր կայծակ լինել ու շանթել նրան—ձեռքը տարաւ գրպանը—գատարկ էր, ատրճանակը խլել էին. ներս վազեց հիւանդի սենեակը, խառնեց սեղանի արկղիկները և ոչինչ չգտնելով մի քանի գատարկ ու լի սրուակներ վերցրեց, վազեց դէպի պատուհանը և ուժգնութեամբ բանալով այն, սրուակները շարտեց դէպի այդ կատաղի մարդը:

Մարդը ցնցուեց, աչքերը պլչեց բժշկի վրայ և երբ վերջինս հայհուցեց նրան, նա սուրը վայր ձգեց հրացանը վերցնելով նշան գրեց—ուզիդ բժշկի կրծքին. բժիշկը յետ քաշուեց. հրացանը սրտաց և բժիշկը տեսաւ թէ ինչպէս իր սաքերի տակ փուռեց երիտասարդ կինը: Գնդակը դիպել էր հիւանդ մանկիկի մօրը:

Մարդասպանը դարձաւ ամբոխին, մի քանի շեշտակի խօսքեր ասաց, որից յետոյ ամբոխը շուռ եկաւ և կատաղութեամբ գրոհ տուեց այն տան վրայ, որտեղից սրուակներն էին տեղացել իրանց խմբապետի գլխին:

Գնդակները կարկուտի պէս տեղում են, մուրճերի ծանր հարուածներն իջնում են դռան վրայ և դուռն արագ հարուածներն տակ՝ ողբալի ճարճաթիւնով իր մօտալուս խորտակումն է երգում: Երիտասարդ կինոջ ամուսինը ուշաթափ վայր է ընկնում գիւղի վրայ, բժիշկը նրա երակն է շօշափում յուսահատութեան գերագոյն աստիճանի մէջ, խելագարութեան շէմքին կանգնած:

—Աւագակները, աւագակները ներս են մըտնում, փախէք, գտում է ծառան ներս ընկնելով և վազում է դէպի խոհանոց, որտեղից նաւթի ահագին ամանը դուրս բերելով լցնում է աստիճանների վրայ և լուցիկն վառում:

Մի քանի րոպէից յետոյ ամբողջ տունը շրջապատուած էր հրեղէն լեզուներով:

Ամբոխը չկարողացաւ ներս խուժել, հրգեհը նրա դէմը կտրեց:

Ծխի մէջ կորան բոյսր սենեակները. բժիշկը չգիտէ թէ որտեղ է գտնուում. շօշափելով մօտեցաւ մահճակալին, սրտատրոփ գրկեց հիւանդ մանկանը, որին ուխտել էր կեանք տալ, ու աչքերը փակած ռկսեց վազել. մօտեցաւ դռանը, այնտեղ խաւար



չէր—կարմիր բոցերը առատ լուսով ողողել էին նախասենեակը, բայց դուրս ելնել անհնարին էր:

Վարանմունքի մէջ մի ըստէ կանգնեց այդտեղ, պէտք էր մի կերպ դուրս պրծնել, պէտք էր գոնէ երեսխային ազատել. այդ ըստէին նա ամեն ինչ մոռացել էր, և՛ կեանք և՛ աշխարհ . . . մոռացել էր մինչև անգամ սարսափները:

Երեսան—մանուկը, մանուկը՝ միայն ազատուէր, այս էր նրա միակ տենչանքը, բայց ինչպէս:

Այդ վարանումի մէջ նա նկատեց մի ուրիշ դուռ փակուած, մի ամուր արացի տուեց, բայց անօգուտ, դուռը չբացուեց: Մանկանը ցած դրեց խնամքով և ամբողջ ուժով սկսեց հրել դուռը, որը կտրուեց և նրա առաջ երևաց միև փոպոցին նախոյ մի պատշգամբ: Նա գրկեց երեսխային, ամուր սեղմեց կրծքին երկու թևերի մէջ և սկսեց վազել պատշգամբի երկարութեամբ. տեղ չկար ցած իջնելու. պատշգամբը երկրորդ յարկումն էր և բաւական բարձր գետնից:

Այդ ժամանակ նա նմանում էր մի գազանի, որ վտանգի մէջ ընկած վազում է այս ու այն կողմ և յուսահատուած իր թաթերն է կրծոտում: Մանկանը կրծքին սեղմած, վազվզելով ընչացքներն ու շրթունքներն էր կրծոտում:

Փողոցում ոչ ոք չէր երևում:

Նա, որ քանի տարուց ի վեր գազարել էր մտածելուց Աստու գոյութեան մասին, յանկարծ

յիշեց այդ մոռացուած էակին, ծունկ չորեց և արտասուաթոր աչքերով հայեացքը ուղղելով մթագնած երկնքին, մի քանի անհասկանալի բառեր մրմնջաց, ապա մի ուժգին շեշտով բարձրաձայն գոչեց:

—Մանկանը, Տէր, մանկանը ազատիր— և մոտենալով պատշգամբի եզերքին, մի ոտիւն գործեց ու ցած թռաւ . . .

Մի ժամից յետոյ, երբ մորթիլը անցել էր, փաթորիկը գազարել, երբ մարդիկ հաշտութեան երդումը տալով զազանութիւնը մոռացած, փոպոց դուրս վալով դիակներ էին հաւաքում, այնտեղ գտան մի ուշաթափուած մարդ, կրծքին մի երեսխայի գալկացած դիակ ամուր սեղմած:

Բժիշկը ուշքի եկաւ, իսկ մանուկն այլ ևս երբէր չգարթեց:

Ե.

Մի քանի օր էր արդէն, որ սարսափներն անցել էին: Մարդու մէջ նստած անգուստ գազանը իր նախկին եռանդը կորցրած՝ քնել էր, կամ քրնած էր ձեանում—որոճալու համար իր սճիրները: Մարդիկ յանկարծ յիշեցին, որ իրանք մարդ են և նրանց մէջ՝ գազանի կողքին կայ մի հզօր զուպանակ—սանձուղ բոլոր գազաններին . . . և նրանք այժմ աշխատում են գազանի աւերածները շինել:

Խեղճ մարդ, երկու օր հերիք է քո ձեռքով աւերելու այն, ինչ որ կանգնել էիր գարեթի ըն-



Թացրում, և տարիներ են հարկաւոր վերականգնելու  
այն, ինչ որ աւերուել էր մի բանի ժամուայ ըն-  
թացրում:

Գժբախտ քաղաքը իբրև մի մեծ հիւանդանոց,  
համակուած էր վիրաւորների ծանր տնքոցներով:  
Նրա ամեն անկիւնից հառաչանք էր դուրձ թուշուս.  
և արեգակը երկու օրուայ բանտարկութիւնից յետոյ,  
ազատուած ամպեղէն կապանքներից, իր ծիծաղկոտ  
ճառագայթներով հեգնում էր թշուառ երկրի թոյլ  
հառաչները: Մարդիկ մեծ ոճրագործի պէս, որ  
յանկարծ ոճիրը կատարելուց յետոյ զգում է խղճի  
մահաբեր խայթոցները, սթափուեցան և իրանց  
արարքների մասին հաշիւ էին տալիս, քաւելու հա-  
մար այն մեղքերը, որոնք բարդուել էին նրանց  
հաստ պարանոցներին: Երկու օր առաջ մի մար-  
դուն տաննակ գնդակներով էին սատկեցնում,  
այսօր տաննակներով հաւաքուած, աշխատում են  
մի գնդակի վէրքը բուժելու:

Խեղագնր ամբոխ, որ երբէք չգիտես ի՞նչ ինչ  
ես կատարում և սրտեզ է յանգում քո գործնէութեան  
վախճանը:

Քաղաքի բոլոր բժիշկները գիշեր ու ցերեկ  
անդու ջանքեր էին թափում ամբոխի մեղքերը  
թեթևացնելու, նրանց գնդակներին զոհ գնացող  
մահամերձ հիւանդներին բժշկելով:

Երիտասարդ բժիշկը, որ ուշքի գալով տեսել  
էր հիւանդ մանկանը մեռած, որ տեսել էր

իր պատճառով տունը կրակի մատնուած և  
տան մէջ կրակի լեզուներից խորովուած երեք  
կեանքեր, յանկարծ իրան զգաց յանցաւոր:

2է որ եթէ ինքը սրուակները չչսլաւէր, այն-  
տեղից գնդակ չէին արձակիլ, անմեզ կինը շէր  
ուպանուել. այս գիտակցութիւնը իբրև մի սուր,  
ցցուեց նրա սրտում, ու տանջում էր նրան. խիղճը  
զարթեց ու նրա գլխին կարգաց մահապարտի գա-  
տափճիր:

Տուն գաւնալով երբ այնտեղ ամեն բան կար-  
գին գտաւ, նրա սիրտը աւելի խոցոտուեց . . . :  
Իր տունը անվնաս էր մնացել, ինքը կեռագանի էր,  
բայց իր պատճառով ուրիշի տունը աւերուել էր,  
իր պատճառով չորս կեանք անհետացել էր աշխար-  
հից — կեանքեր, որոնք նրան նայեցին իբրև  
փրկարար հրեշտակի և որոնց հաւատը բռնաբարեց  
ինքը մի յիմար արարքով:

Եւ նա թէև ջարդուած ու հիւանդոտ, թէև  
լքուած ու յուսահատ -- վճռեց քաւել իր յանցանք-  
ները. մարդոց կորստեան պատճառ էր եղել, պէտք  
է մարդոց կորստից ազատէր. չորս հոգիներ նըզո-  
վում էին նրան և այդ նզովքներից ազատուելու  
համար նա պէտք է վաստակէր բազմաթիւ հոգի-  
ների օրհնանքը:

Ու նա դուրս եկաւ իրան գնելու հասարակու-  
թեան տրամադրութեան տակ. մտաւ հիւանդանոց  
և ուխտեց այնտեղ մնալ մինչև այն օրը:



արհաւիրքները ընթացքում վերաւորուած հիւանդ-  
ներից վերջինը գուրս կը գար այնտեղից առու-  
ջացած:

Գնաց հիւանդանոց, մտաւ այդ հառաչանքնե-  
րի հովիտ, արտասուքների ծով աշխարհը, և  
առաւօտից մինչև երեկոյ, գիշերները մինչև առա-  
ւօտ, ամեն բան մոռացած — կ' հաց, կ' ջուր, կ'  
քուն, աշխատում էր տանջուելով. ու այդ տան-  
ջանքները նրա հոգուն մի բուրաւէտ մխիթարու-  
թիւն էին բերում:

Այնպիսի հոգատարութեամբ, այնպիսի հայրա-  
կան խնամքներով էր մօտենում հիւանդներին, որ  
նորա շուտով ընտելացան նրան և բոլորը նրան էին  
սպասում:

Ինքը բննում էր վերքերը, գնդակը հանում  
վերքի միջից, լուանում վերքը, իր ձեռքով կապում,  
ապա յուսադրելով հիւանդին քաղցր, շատ քաղցր,  
յուսատու խօսքերով, անցնում էր միւս հիւանդին:

Եւ որքան լաւ էր այստեղ կեանքը նրա հա-  
մար:

Նա մօտենում էր կ' ծերին, կ' մանուկին, կ'  
հային, կ' թուրքին. հաւասար հոգատարութեամբ  
ծառայում բոլորին, և հառաչանքների նուազելու  
հետ նուազում էր նաև նրա խղճի խայթոցների  
թափը: Իսկ երբ մի հիւանդ՝ չնայելով նրա բոլոր  
ջանքերին, մեռնում էր, նա թաշկինակը տանում էր  
աչքերին և սրտի խորքից վերաւորուած, խաբուած

երեսայի նման հանգուր-հոնգուր լաց էր լինում—  
լալիս էր իր անդօրութիւնը մահուան դէմ:

Բայց ահա բերանները բացում են, շրթուներ-  
ները շարժում, մարուսդ աչքերը նրա երեսին յառ-  
ւում, և նա լսում է օրհնանքներ, որոնք նրան նո-  
րից ոյժ ու հոգի են ներշնչում:

Ու բժիշկը շարունակում էր իր սրտապարար  
գործը:

Մի վիթխարի անձնաւորութիւն էր մէջքի  
վրայ ձգուած մահճակալին, ձեռքերը վերմակից  
գուրս հանած և առաստաղին նայելով բերանաբաց  
հետւում էր: Գնդակը դիպել էր ծնօտին աջ կողմից  
և ծնօտի ոսկրը փշրելով անցել էր ձախ այտի մէջ  
և մնացել այնտեղ: Հիւանդի երեսը ուռել էր, ինչ-  
պէս ուռչում է խեղդուած մարդու դէմքը. մի ուրիշ  
գնդակ էլ անցել էր աջ ոտի միջով, որը, սակայն,  
աւելի անմնաս էր, քան թէ երեսինը:

Հիւանդը տեսնելով որ բժիշկը մօտենում է  
իրան, մի շարժում գործեց, բոտ երևոյթին ուղե-  
լով նստել, բայց չկարողացաւ և ցաւ վզալով ձեռքը  
դրեց այտին ու յուսահատ աչքերն ուղղեց դէպի  
բժիշկը, որ արդէն նրա մահճակալի մօտ էր կանգ-  
նած:

Բժիշկն սկսեց քննել հիւանդին. ձախ ձեռքը  
կամացուկ մոցնելով գլխատակը, զլուխը բարձրա-  
ցրեց պէպի առաջ, աջ ձեռքի բթամատով վերևի



չրթունքը դէպի վեր բարձրացրեց, նայեց իր լայն ու փայլուն աչքերով նրա բերանի մէջ, և համոզուելով որ գնդակը այնտեղ չէ մտել, ցուցամատով սկսեց շոշափել այտոսկրը: Հիւանդը մի անհանդիստ շարժում գործեց և մի խղճալի հառաչ արձակելով ուզում էր զլուխը բժշկի ձեռքից ազատել:

— Մի վախէք, ոչինչ, հանդարտուեցէք, հոգիս, կը լաւանար—ասաց բժիշկը, մի կսկիծ զգալով իր ներսում. չէ որ զոհ էր, անմեղ ու աննպատակ զոհ . . . :

Արեգակի ճառագայթներն արդէն սկսել էին հիւանդանոցի արեմտեան պատուհաններից ներս խուժել և հետաքրքիր ոտտիւններով աշխատում էին մօտենալ մահճակալին, գիտելու համար բժշկի մարդասիրական ձեռնարկը: Ժամի երկուսն էր, այդ վերջին հիւանդն էր, որին նայելուց յետոյ բժիշկը մի ժամ պիտի հանգստանար և ապա նորից սկսէր իր գործը:

Քայց նա չէր շտապում. այնպէս խորագնին ու մանրամասն էր նայում հիւանդին, ինչպէս նա յել էր առաւօտը, լուսաբացին, երբ մի բանի ժամ քնելուց յետոյ նոր էր մտել հիւանդանոց:

Հիւանդը սաստիկ նուազել էր ցաւի ազդեցութեան տակ. գնդակը խորը կերպով ծակելով այտոսկրը, նստել էր նրա մէջ, պէտք էր անդամահատել. բժիշկը մտածեց վերքը սրբելուց յետոյ կապել և ապա փոխադրել անդամահատութեան

սննեակը, անդամահատելու համար,

Քարակ սւ ջղոտ ձեռքերով տափակացնելով բամբակը, դրեց այտի վրայ, վերցրեց ծառայի ձեռքից սպիտակ շորի կտորը, երկարութեամբ երկու տակ ծալեց և զգուշութեամբ քաշելով բամբակի վրայ, գլխով ծառային նշան արեց, որ առաջի կողմից շորը պահի վերքին, որպէսզի բամբակը չշարժուի. ինքը բռնեց շորի երկու ծայրերից, տարաւ դէպի զլուխը, մատներով զլուխը բարձրացրեց, շորի ծայրերը մօտեցրեց միմեանց և ուզում էր կապել, յանկարծ հիւանդի աչքերը բացուեցան ծանրութեամբ և բժիշկը նայելով նրանց մէջ, պատրաստուում էր նորից մի հանգստացուցիչ խօսք ասել, հայեացքը բևեռեց հիւանդի աչքերին... և մի մահաբեր սարսուռ զգաց:

Նրա ձեռքերը դողդողացին, հետզհետէ թուլացան և կպան բարձին; ճշուելով հիւանդի կիսով չափ ածելած գլխի և փսս ընկած բարձի արանքում:

Բժիշկը ապուշ-ապուշ սկսեց նայել հիւանդին, նրա աչքերի վրայ ինչ որ քօզի պէս մի բան քաշուեց, կոպերը մէ քանի անգամ արագ-արագ բաց ու խուփ եղան, լայն ճակատի վրայ ցօլի հատիկների պէս քրտինքի խիտ կաթիլներ բուսան, և նա, կարծես օրինակ առնելով հիւանդից, ծանր կերպով սկսեց հնալ:

Նայում էր ուղիղ հիւանդի աչքերի մէջ, որոնք



կարծես հետզհետէ լայնանում ու մեծանում էին, որի ժամանակ նաև դէմքը երկարում էր ու մշուշով պատւում. այդ մշուշը հետզհետէ թանձրանալով կարմիր գոյն էր ստանում, որի միջից քիթը ցրցուելով ու երկարելով մի պատկեր էր ներկայացնում, որ կարծես բժշկին ծանօթ էր:

Ահա քթի սուր ծայրին ինչ-որ բան է երևում, կարծես մսի գունդ է, որից արիւն է կաթկաթում. քիթը երկարեց, սրացաւ, փայլեց այնպէս, որ բժշկին թուաց թէ սուր է տեսնում, մերկացրած արիւնաթաթախ սուր, որի ծայրին կարծես թէ սիրտ — մի փոքրիկ ու տաք սիրտ է տրոփում. նա մինչև անգամ այդ տարբութիւնն զգաց . . . ապա բժիշկը տեսաւ ինչ-որ փոքրիկ արարածներ, որոնք կարծես մարդիկ լինէին, որոնք վազվզում ու գոռում էին . . . Ու նա ձայն լսեց, ծանօթ ձայն... սհ, այդ ձայնը, դժոխային այդ աղաղակը նրա ականջին անծանօթ չէր. յիշում է, լսել էր, նորից է լսում . . . ամբողջի ունոցն էր այն . . . :

Նա դողաց. ապա տեսաւ իր առաջ մահճակալը. վրան փոքրիկ մանկիկը պառկած հոգեվարք դրութեան մէջ . . . պէտք էր նրան կիանք տալ, զրկեց նրան, վազեց բոցերի մօտով, ճանապարհ չկար, դուրս եկաւ պատշգամբի վրայ, խաշակիքեց ու թռաւ, մինչև անգամ ցաւ է զգում իր ստրեբում, մարմինը դիպաւ քարերին, երեսան ճշաց ու մարեց . . . :

Երազ չէ: Բժիշկը գողգողալով վայր ընկաւ մէջքի վրայ մի վայրենի աղաղակ բարձրացնելով:

Ծառան, որ բժշկի տարօրինակ վարմունքը տեսնելով թողել էր վէրքը և ապշած նայում էր նրան, դուրս վազեց ջուր բերելու:

Բժիշկը թռաւ, ստքի կանգնեց, աջ ծունկը զրեց մահճակալի վրայ — հիւանդի կողքին, երկու ձեռքով բռնեց նրա գլուխը, վեր բարձրացրեց, նայեց աչքերին, կարծես ինչ որ բան կարգաց այնտեղ և զիւահարի պէս գոռաց.

Գտնյ, գտնյ... դու ես, դու, ոճրագործ . . . բժշկուում ես, առողջանում ես, որ սրտեր հանես, մանուկ, անմեղ փոքրիկ սրտեր, կրծքի տակից, սրի ծայրով... պարելու համար... Ուզում ես առողջանալ, տներ հրդեհել, որ մանուկները մեռնեն, որ կեանք շտեմեն... Գու շարագործ, և ես քեզ կեանք եմ տալիս, դու, դժոխքի մեքենայ, և ես քեզ լարում եմ աշխարհի ցաւերը բազմապատկելու համար: Աչքերիդ մէջ հրդեհ կայ, հանգրու, հանգրու, տները այրում է, մարդիկ կենդանի-կենդանի խորովում են այդ հրդեհի մէջ. չուտ արա, արտառուք ցանիր, ջուր սրսկիր, հրդեհը բռնկում է, տարածում է... քեզ էլ կը համնի . . . :

Եւ նա ուժգնութեամբ հիւանդի գլուխը ցրնցելով առաջ քաշեց, նստեցրեց նրան և նորից լուռ սկսեց զիտել:

Ապա գոշեց.



— Գնւ ես սխալուած չեմ... ասո՛ւ, գոհերի՛ն թէ ոճրագործին. ասո՛ւ, գոհերի՛ն սպանեմ թէ ոճրագործին. գոհերի՛ն բժշկեմ թէ ոճրագործին: 2! որ աշխարհի երեսից գոհերը երբէք չեն վերջանալ, քանի ճրագործը կենդանի է . . . մեռիք:

Եւ նա քաշքշու՛մ էր հիւանդի գլուխը ձօժրակից ու կոկորդից բռնած, այնպիսի ուժով, որ քիչ էր մնում մարմնից պոկէր, և կրակոտ, ձայնով շարունակում էր որոտալ.


— Սո՛ւ էր, սա, Աստուած է վկայ, սա էր, աշքովս տեսայ. պատուփս եմ երգում, սա էր, մանկան կուրծքը պատռեց ու սիրտը հանեց այնտեղից... տո՛ւր ինձ քո սիրտը, տու՛ր, ուզում եմ ես էլ պարե՛լ քեզ նման, այնպէս պարե՛լ ինչպէս դու էիր պարում այն օրը:

Բամբակն ու շորը յանկարծ պոկելով վերքի վրայից, առաւ ձեռքերի մէջ, նայեց, ամուր սեղմեց, գցեց ոտքերի տակ, սկսեց արորել շարաճճի մանկան ինքնագոհ ժպտով, ապա դարձաւ հիւանդին աչքերը պլշեց նրա վրայ, բերանը լայն ու ծուռ բացեց, ձեռքերը բարձրացրեց օդի մէջ, ամուր խփեց միմեանց, կուրծքը լայն բանալով ներս շնչեց թանձր օդը, ապա բարձր, շատ բարձր ձայնով մի կատաղի ու վայրենի քրքիջ արձակեց ու ամբողջ հասակով փռուեց յատակին:

Երբ ծառան ջրով լի բաժակը ձեռքին ներս մտաւ, տեսաւ մահճակալի մօտ յատակի վրայ փրո-

ուած բժշկի անշարժ դիակը և հիւանդին բառեցրը սեղմած, ատամները կրճտեցնելիս:

Բժշկի դէմքին դեռ կենդանի էր քարացած ծիծաղը, որից, սակայն, խուտափելու համար, ծառան սոսկումով երեսը շուռ տուեց:






Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and mostly illegible due to fading and the texture of the paper.



|||

|||

|||





«Ազգային գրադարան»



NL0355234



42483